



# ԻՆՉՈ՞Ւ ԲՈԼՈՐՍ ՆՈՅՆ ԼԵՉՈՒՈՎ ՉԵՆՔ ԽՕՍԻՐ

Պատմութեան սկիզբը, շատ հաւանաբար մարդկութիւնը կը խօսեր միեւնոյն լեզուով: Ժամանակի ընթացքին մայր լեզուն տարածուեցաւ եւ փոփոխութեան ենթարկուեցաւ:

Սկիզբը, մայր լեզուն կը խօսուէր փոքր խումբ մը մարդոց կողմէ, կամ տաղտղնուած խմբակներու կողմէ: Ժամանակի ընթացքին, կարգ մը խմբակներու թիւը մեծցաւ եւ անոնց համար բաւարար ուտելիք չկար իրենց բնակած հողերուն վրայ: Հետեւաբար խումբ մը մարդիկ հեռացան իրենց բնակավայրէն եւ հաստատուեցան նոր տեղ մը:

Նոր տեղ հաստատուողները պահեցին իրենց լեզուն: Մինչ այդ նոր հնչիւնաբանութիւն մը մուտք գործեց լեզուին մէջ: Մարդիկ սկսան քիչ մը տարբեր ձեւերով հնչել եւ արտասանել բառերը:

Կարգ մը բառեր, որոնք հին բնակավայրին ու տան մէջ կը գործածուէին, այլեւս անգործածելի դարձան: Նոր փորձառութիւնները պատճառ դարձան նոր բառերու գործածութեան: Նախադասութիւն կազմելու ձեւերը փոխուեցան: Պահ մը պատկերացուցէ՛ք, որ ժողովուրդ մը կ'ապրի հողի մը վրայ, եւ նոյն հողին վրայ նոր ժողովուրդ մը կու գայ հաստատուելու: Ինքնաբերաբար երկու լեզուները իրարու կը խառնուին, հետեւաբար երկու լեզուներն ալ փոփոխութեան կ'ենթարկուին:

Երբ նոր ժողովուրդի մը լեզուն քիչ մը կը տարբերի մայր լեզուէն, այդ լեզուն «բարբառ» կը կոչուի: Երբ ժամանակի ընթացքին լեզուին բառերը, հնչիւններն ու քերականութիւնը կը փոխուին, այն ատեն ատիկա կրնանք նոր լեզու նկատել:

Այս ձեւով սպաներենը, ֆրանսերենը եւ փորթուկալերենը յառաջացած են լատիներէնէն, իսկ անգլերենը, նորվեկերենը, շուէտերենը եւ հոլանտերենը՝ գերմաներէնէն:

NAMASTE

مرحبا



Բարև

HELLO


你好  
(NI HAO)

こんにちは  
(KONNICHIIWA)

CIAO



Սկիզբ եւ վերջ ցոյց տուող նշաններուն համաձայն, գտի՛ր ելքի ճամբան:



Այս անասունները ո՞ր կ'ապրին: Իւրաքանչիւրը դի՛ր յարմար սիւնակին մէջ:



Ամբողջացո՛ւր քառակուսիները՝ թիւերուն եւ թուաբանական նշաններուն հետեւելով:

Նշանակե՛ այն առարկաները, որոնք ջերմութիւն կու տան:



$$\begin{array}{|c|c|c|} \hline & + & 3 = 4 \\ \hline + & + & + \\ \hline 6 & + & = \\ \hline = & = & = \\ \hline + & = & 10 \\ \hline \end{array}$$

$$\begin{array}{|c|c|c|} \hline 4 & + & = \\ \hline - & - & - \\ \hline & + & 3 = 5 \\ \hline = & = & = \\ \hline + & = & 3 \\ \hline \end{array}$$

$$\begin{array}{|c|c|c|} \hline 7 & - & 4 = \\ \hline + & - & + \\ \hline 5 & + & = \\ \hline = & = & = \\ \hline & - & 2 = 10 \\ \hline \end{array}$$

# ԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ԽԱՂԸ

Գիտե՞ր թե ափրիկեան Մասսա ցեղախումբին մանուկները իրենց իսկական անունը կը ստանան իրենց ծնունդէն քանի մը տարի ետք:

Գարնանային արձակուրդին ժամանակն է: Սակայն 11 տարեկան Սիլվիա Սուլթ իր ամառնային հագուստները չի պատրաստեր իր ընկերուհիներուն հետ ծովային պտոյտ մը ընելու համար: Ան Մարա Զիլզ ակադեմիայի իր գիշերօթիկէն դէպի տուն՝ Զենիոյ մէջ Լեսեր գիւղը կ'ուղղուի: Ան իր ծննդավայրը կ'երթայ, որովհետեւ հոն տեղի պիտի ունենայ՝ Մասսա անուանելու տօնակատարութիւնը:

Սօտաւորապէս հազար տարիէ ի վեր Մասսա ցեղախումբը շրջած է արեւելեան Ափրիկէի խոտերով ծածկուած տափաստաններուն մէջ, իրենց անասունները բլուրներուն վրայէն քշելով, ջուրի աղբիւր մը՝ այլ ջուրի աղբիւր: 20-րդ դարու ընթացքին փոխադրուած ան միջոցներն ու արհեստագիտական փոփոխութիւնները ազդած են Զենիոյ եւ

Թանգանիոյ մէջ գտնուող Մասսա ցեղախումբերուն վրայ: Կարգ մը մասսաներ լքած են իրենց գիւղերը՝ քաղաքային կեանքը նախընտրելով: Այս ձեւով Սիլվիային նման բազմաթիւ մանուկներ արդի դպրոցներ կը յաճախեն, Ե-նամակներ եւ բջիջային հեռաձայններ կը գործածեն: Զակառակ ասոր, մասսաները իրենց սովորութիւնները կը պահեն:



Անուանակոչելու արարողութիւնը շատ կարեւոր առիթ է Մասսա մանուկի մը կեանքին մէջ: Սօտաւորապէս 2 կամ 3 տարեկանին, Մասսա մանուկները կը հրաժարին իրենց ծնունդին կրած ժամանակաւոր անունէն եւ կը ստանան նոր անուն մը, որ պիտի պահեն զայն իրենց ամբողջ կեանքին ընթացքին: Ընտանիքին շատ մօտ երկու անձեր կ'օգնեն լաւ անուն մը ընտրելու համար: Այդ անունը իւրայատուկ պէտք է ըլլայ: Ընտանիքէն ուրիշ անդամներու անունները գործածելը արտօսուած չէ:

Այսպիսով՝ առաջին անգամ ըլլալով մանուկը ցեղախումբին իր նոր անունով կը ներկայացուի: Ասիկա մանուկին կեանքին մէջ նոր սկիզբ մըն է:

Գիւղին անդամները անհամբերութեամբ կը սպասեն այս արարողութեան: Այս առիթով Սիլվիա կը դնէ ապարանջաններ եւ երեք հատ շուքաներ՝ գունաւոր կերպասի կտորներ, որոնք կը ծածկեն անոր ուսերն ու մարմինը: Սիլվիան եւ իր ընկերները իրենց սիրած երգերը կ'երգեն ու կը պարեն:

## ԳԻՏԵԻՐ, ԹԵ...

### ՉԱՆԱՉԱՆ... ՉԱՆԱՉԱՆ

\* Կազով բանող ինքնաշարժը ունի բարդ մարտկոց (պաթըրի) մը, որ կայծ մը կ'արձակէ: Անկկա կ'այրէ մեքենային մէջ գտնուող կազն ու օդը՝ մանր պայթումներու նման: Այդ պայթումները ուժանիւթ կը յառաջացնեն ինքնաշարժէն ուրիշ բաժնի մը: Փոխանցիչը այս ուժանիւթը կը դրկէ մեքենայէն անիւներուն:

\* Հենրի Ֆորտի կազով բանող Մատրլ Թի ինքնաշարժը շուկայ իջաւ 1908 թուականին: Ան առաջին ինքնաշարժն էր, որ կը քշուէր պարզ ժողովուրդին կողմէ, Ամերիկայի մէջ: Անոր առաւելագոյն արագութիւնը կը հասներ ժամական 64-72 քմ.-ի:



### ՀԱՆՍԸԸ ԵՒ ԿՐԵԹԸԼԻ ԻՍԿԱԿԱՆ ՏՈՒՆԸ

Մենք ծանօթ ենք Հանսըլ եւ Կրեթլի հեքիաթին, որուն մէջ այս եղբայրն ու քոյրը անտառին մէջ կը գտնեն անուշեղէններէ եւ տուրմէ շինուած տուն մը:

Սակայն իրական կեանքին մէջ ալ մենք կրնանք հանդիպիլ այս հեքիաթային տան՝ Պրայընի մէջ, Միացեալ Նահանգներ: Ան կարկանդակներէ եւ անուշեղէններէ պատրաստուած աշխարհի մեծագոյն տունն է:

Ան ունի 18.28 մեթր երկայնք եւ 12.80 մեթր լայնք, իսկ անոր բարձրութիւնը 3 մեթրի կը հասնի:

Այս կարկանդակէ տունը պատրաստելու համար տարբեր նիւթերուն կարգին գործածուած են, 7200 հաւկիթ, 3300 քիւօ ալիւր, 800 քիւօ կարագ: Իսկ տան պատերը զարդարելու համար՝ 23.404 գունաւոր շաքար:

